

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	ՄԵՏԱՂԵ, ՓԱՅՏԵ ԵՎ ՊԼԱՍՏՄԱՍՍԵ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ (6ՇԻԿ018)
ECTS կրեդիտ	4 կրեդիտ
Դասընթացի պատասխանատու դասախոս	Աղբալյան Յա. Գ., տ.գ.թ., դոցենտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	<p>Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p><i>(գիտելիք և իմացություն)</i></p> <ul style="list-style-type: none"> • սահմանել պողպատի, փայտի և պլաստմասսի մեխանիկական հատկությունները, • որոշել ստատիկ բեռնվածքի ազդեցության տակ պողպատի, փայտի և պլաստմասսի աշխատանքը, • նկարագրել մետաղի և փայտի տեսակացանկում ընդգրկված պրոֆիլները, • բացատրել և տարբերակել մետաղե, փայտե և պլաստմասսե տարրերի հաշվարկման հիմունքների սահմանային վիճակների եղանակները, • ներկայացնել մետաղե, փայտե և պլաստմասսե կոնստրուկցիաների միացման տեսակները, • տարբերակել շինարարությունում կիրառվող տարբեր տեսակի մետաղե, փայտե և պլաստմասսե կոնստրուկցիաների հոծ և կազմովի հեծանների, պյունների ֆերմաները: <p><i>(կարողություններ)</i></p> <ul style="list-style-type: none"> • որոշել օգտագործվող պողպատների մակնիշը և դիմադրությունը, բնափայտի տեսակը և դիմադրությունը, • որոշել կոնստրուկցիայի հաշվարկային սխեման, նրա վրա ազդող հաշվարկային բեռնվածքները և դրանցից առաջացող ճիգերը, • կատարել ծովող, սեղմվող, ձգվող, համատեղ սեղմման և ծոման աշխատող տարրերի հատվածքների ամրության հաշվարկ և կոնստրուկտավորում, • որոշել տարբեր պրոֆիլներ ունեցող հեծանի հաշվարկային բեռնվածքները, • կատարել ընտրված հատվածքի բոլոր անհրաժեշտ ստուգումները,

	<ul style="list-style-type: none"> • կատարել մետաղե, փայտե և պլաստմասսե կոնստրուկցիաների տարբեր ուժային ազդեցությունների հաշվարկ, • փոխարինել (անհրաժեշտության դեպքում) հեծանի հոծ հատվածքը կազմովի հատվածքով՝ օգտագործելով հեղուսներ, եռակցումային կարեր, գամեր կամ սուսիններ:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	<ul style="list-style-type: none"> • Մետաղե կոնստրուկցիաների կիրառման ասպարեզները: Միացումներում և կոնստրուկցիաներում օգտագործվող պողպատներ: • Մետաղե կոնստրուկցիաների արժանիքները և թերությունները: Մետաղի տեսակացանկը: • Մետաղե կոնստրուկցիաների հաշվարկման հիմունքները: • Եռակցումային միացումներ, դրանց տեսակները: Եռակցումային կարերի ձևերը, հաշվարկի հիմունքները: • Գամային և հեղույսային միացումներ: • Մետաղե հեծաններ: Տեսակները, հատվածքների տիպերը: • Հեծանավանդակներ և դրանց տիպերը: • Սյուներ: • Սյուների բազաներ (սյունակալներ), դրանց տեսակները: • Սյունագլուխների տիպերը: Սյան և հեծանի միացման տեսակները: • Մետաղե ֆերմաների տեսակները, դասակարգումը և հիմնական չափերը: Վանդակների համակարգերը: • Մետաղե ֆերմաների ձողերի հատվածքի տիպերը, հաշվարկի հիմունքները: • Փայտե և պլաստմասսային կոնստրուկցիաներ: • Փայտե էլեմենտների հաշվարկը: • Սոսնձված հեծաններ: • Շրջանակներ, դրանց տեսակները, հաշվարկի հիմունքները, հանգույցներ: • Փայտե ֆերմաների աշխատանքը, կիրառումը, կոնստրուկտավորումը, հանգույցները: • Պլաստմասսաների, տեսակները, ֆիզիկամեխանիկական հատկությունները, միացման ձևերը, հաշվարկի առանձնահատկությունները:

<p>Դասընթացի գրականության ցանկ</p>	<ul style="list-style-type: none"> • Աբովյան Գ.Ա. Մետաղե կոնստրուկցիաներ, Լույս, Երեվան, 1977թ.: • Աղբալյան Յա. Գ. Ծածկի փայտե կոնստրուկցիաներ, Երևան, 2005թ.: • Աղբալյան Յա. Գ. Փայտե և պլաստմասսե կոնստրուկցիաների հաշվարկի օրինակներ, Երևան, 2005թ.: • Աղբալյան Յա. Գ. Տարբեր երկրների փայտե կոնստրուկցիաների նախագծման նորմերի համեմատական վերլուծություն, Երևան, 2005թ.: • СНиП 11-80. Деревянные конструкции, Строительные нормы и правила, Москва, 2002г.
------------------------------------	---

ՇԿ ամբիոնի վարիչ՝

Դադայան Տ. Լ.